

ԿՐԹՆԵԿԱՆ—ԲԱՐՈՅԱԿԱՆ

Ս. ՅՈՎՀ. ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ԱՌԱՔԵԱԼԻ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ.
ԳՐՔԻ ԿԱՆՈՆԱԿԱՆ ԱՐԺԷՔԸ I—II ԴԱՐԻ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ
ԱՌԱՆԴՈՒԹԵԱՆ ՎԿԱՅՈՒԹԵԱՄԲ.

(Христ. чтение, 1913 թ. Н. А. Гамолко)

Յովհաննէս երէց կոչեցեալի պատմական հանգամանքը վերին աստիճանի երկբայական է: Ոչ ոք չի կարող որոշ մի բան ասել այս վիպական մշուշով պատուած անձի մասին, որ առաջին անգամ երևան է գալիս Կեսարացի պատմչի միտումնաւոր ձգտման շնորհիւ, ինչ էլ լինի՝ ապացուցանելու, թէ Յայտնութիւնը Յովհաննէս առաքեալից ջոկ՝ այլ Յովհաննէս երէցի գործ է: Յովհաննէս երէցի պատմական գոյութեան ամենազօրաւոր փաստն է Եփեսոսում եղած երկու Յովհաննէսների գերեզմանների մասին կասկածելի տեղեկութիւնը¹⁾:

Բայց եւս երրոս Կեսարացուց, Յովհաննէս երէցի պատմական գոյութեան ջերմ պաշտպան հանգիստանում է Դիոնեսիոս Ալէքսանդրացին էլ: Որովհետեւ թէ մէկն և թէ միւսը պատկանում են այն խմբին, որոնք Յայտնութեան առաքելական ծագումը հերքում են, ուրեմն պարզ է, թէ ինչից զրդուած նրանք այդպէս ջերմօրէն պաշտպանում են իրանց վիպական Յովհաննէսին: Նրանք պէտք է ցոյց տային, թէ Յայտնութեան գրողը, փոքրասիական եկեղեցում այդպէս յարգուած և յայտնի Յովհաննէսն է. այդ դերի համար երկուսին էլ յարմար էր համարւում վիպական Յովհաննէս երէցը, որը որպէս թէ Յովհաննէս առաքեալի հետ ապրել և գործել էր Եփեսոսում և այնտեղ էլ թաղուել: Բայց եթէ Եփեսոսում իսկապէս Յովհաննէս առաքեալի հետ ապրել

1) Երանելին Յերոնիմոս (De viris illustr. ear. 9) այս առիթով գրում է. «nonnulli putant duas memorias ejustem apostoli Johannis esse».

ու գործել է նոյն անուանը կրող մի ուրիշ, աչքի ընկնող անձն, ուրեմն իրենէոս Լիոնացին, որ շատ մօտ էր փոքր ասիական շրջանին, չէր սահմանափակուի սոսկ «աշակերտ Տեառն» բառով, այլ անկասկած նրա համար կը կցէր ուրիշ յատուկ և բնորոշ մակդիր:

Եփեսոսի եպիսկոպոս Պօլիկրատէսը պրեսբիտէր—երէց Յովհաննէսի պատմական գոյութեան հակառակն է խօսում առ Հռովմայ եպիսկոպոսն Վիկտոր և առ նրա եկեղեցին գրած թղթում¹⁾: Պօլիկրատէսը եփեսոսում միայն մի Յովհաննէս առաքեալ գիտէ, եթէ այնտեղ իսկապէս բացի առաքեալից կար որ և է այլ Յովհաննէս երէց, ապաքէն փոքր ասիական եկեղեցու հիմնական սկզբնաւորութեան պատմութեան մէջ կը յիշէր այնտեղ թաղուած այն մեծ ննջեցեալին ևս, որ Տիրոջ երկրորդ գալստեան ժամանակ փառաւորապէս յարուցանէր:

Ինքն Եւսեբիոս Կեսարացին ցոյց է տալիս իւր հասկացողութեան և մեկնութեան անկայունութիւնը, իւր ժամանակագրութեան (քրօնիկա) մէջ Պապիաս Յերապօլսեցուն անուանելով Յովհաննէս առաքեալի աշակերտ²⁾:

Ս. Յուսիմոս փիլիսոփայի վկայութիւնը:—Ս. Յուստինոս փիլիսոփան և նահատակը († 166 թ.), որը քրիստոնեայ ամենանշանաւոր ջատագովներից մէկն էր, իւր «Dialogus cum Triphone Judaeo» շարադրութեան մէջ պարզ և որոշակի վկայութիւն է տալիս Յայտնութեան մասին: Յուստինոս փիլիսոփան, անկասկած, Պողիկարպոս Զմիւռնացու և Պապիաս Յերապօլսեցու (մօտաւորապէս 140 մինչև 160 թ.) կրտսեր ժամանակակիցն էր, և իւր կեանքում շատ էր ճանապարհորդել: Նա լաւ գիտէ իւր հայրենիք Պաղեստինը, նա յայտնի էր Եզրպտոսում ու Ալէքսանդրիայում, Իտալիայում ու Հռովմում, Փոքր-Ասիայում ու

1) *See* Euseb. Hist. Eccles. V. 24.

2) «Johannem Apostolum usque ad Trajani tempora Iraenaens episcopus permanisse scribit, post quem auditores ejus insignes fuerunt Papias Hieropolitanus episcopus et Polycarpus Smyrnaeus et Ignatius Antiochenus».

Եփեսոսում: Իսկ Եփեսոսում, ըստ Եւսեբիոս Կեսարացու (Եկեղ. պատմ. V, 18), վէճը կամ բանակոխը Տրիփոն հրէայի հետ տեղի էր ունեցել մօտաւորապէս 150—160 թուին: Այս անձի վկայութիւնը Յայտնութեան մասին ունի մեծ նշանակութիւն և, ամենայն հաւանականութեամբ, վերաբերում է Բ. դարին, (ոչ առաջ քան 139 և ոչ յետոյ քան 160 թուականը): Տրիփոնի հետ տրամախօսութեան ժամանակ (80—81 զլ.) Յուստինոս փիլիսոփան խոստովանում է իւր, ինչպէս ինքն է կարծում, իսկ-քրիստոնէական հաւատը միայն մարմնի յարութեան և, Քրիստոսի հետ հաղարամեայ թագաւորութեան վերաբերութեամբ նոր Երուսաղէմում եղեկիւէլի, Եսայիի և այլ մարգարէների դուշակութեան համեմատ: Որովհետեւ ինչիրը Տրիփոնին քրիստոնեայ դարձնելու մասին էր, ուրեմն, թէ քրիստոնեաների և թէ հրէաների համար միապէս հեղինակութիւն համարուած Հին Կտակարանի հետ (Եսայի, եղեկիւէլ, Ծննդոց զիրք, Սաղմոս), Յուստինոսը յենում է նոյնպէս նոր-կտակարանեան Յայտնութեան վկայութեան վերայ էլ, կամենալով ապացուցանել Տրիփոնին, այս խնդրում, Հին և նոր Կտակարանների մարգարէութիւնների համաձայն լինելը: Իւր քրիստոնէական հաւատը արդարացնելու համար Յուստինոս փիլիսոփան մէջ է բերում Հին Կտակարանից բազմաթիւ օրինակներ (Ծնն. 2, 17. Սաղմ. 89, 4. Ես. 65, 17) և ըստ իւր կամեցած ուղղութեան մեկնելով ցոյց տրուած տեղերը՝ յենում է նաև Յայտնութեան 20, 3.¹⁾ և նոյնինքն Քրիստոսի խօսքերին, որոնցով, որպէս թէ, հաստատւում է Յայտնութեան մէջ ցոյց տրուած մարգարէութիւնը, և յատկապէս՝ թէ, յարութիւնից յետոյ մարդիկ ամուսնանալու չեն, չար բանի չեն ձգտելու, այլ լինելու են յարութեան որդիք (Ղուկ. 20, 32—35): Իւր գիալօգի (տրամախօսութիւն) 82 զլխում Յուստինոսը ապացուցանում է, որ մարգարէական շնորհները, որպէս Հին

1) S^{hu} Dial. cum Triph. c. 81.: S^{hu} Lücke, Einl. S. 275—276: Հմտ. Bousset, op. cit. S. 13:

Կտակարանի Իսրայէլի արտօնութիւն՝ ժառանգարար անցել է քրիստոնէական եկեղեցուն, ուրեմն սուտ մարգարէների գոյութիւնը չի կարող առիթ համարուել Քրիստոսի աւետիքին չհաւատալու. (Հմտ. Եւս. եկեղ. պատմ. IV, 18):

Եւսեբիոս Կեսարացու աչքից արդէն չէ վրիպել այս նկատմամբ Յուստինոս Փիլիսոփայի վկայութեան պարզութիւնն ու անմիջական լինելը՝ թէ Յայտնութիւնը սուրբ, իսկական քրիստոնէական գիրք է և Յովհաննէս առաքեալի գրչին է պատկանում: Բայց չնայելով այս վկայութեան բոլոր պարզութեանը, նրան զանազան նշակութիւն են տալիս. մինչդեռ Յայտնութեան գրքի առաքելական ծագումն պաշտպանողները այստեղ տեսնում են իրանց համոզման անփիճելի հաստատութիւնը, — մեր գրքի հակառակորդները, ընդհակառակն, ս. Յուստինոսի վկայութիւնից կապտում են նրա բոլոր պատմական արժէքը և վճռաբար ոչնչացնում նրա յատուկ հեղինակութիւնը, համարելով նրան Քիլիազմի հետևող և ընդհանրապէս մի մարդ, որ իւր պատմական խորհրդածութեան մէջ անձեռնհաս է: Հակառակող կողմերի¹⁾ վէճի մանրամասնու-

1) Ըստ Լիւկկէի վիճելի խնդրի էութիւնը (Einl. I Aufl. S. 277 f.) յանգում է այն բանին, որի վերայ հանդիման է Յուստինոսի վկայութիւնը, ինչի այն հաստատուն պատմական աւանդութիւն թէ նրա անձնական փառահայտումն, որ հիմնուած է նոյն Յայտնութեան մեկնաբանական ցուցմունքի վերայ: Ս. Յուստինոսի վերառած վկայութիւնը ինքն ըստ ինքեան խնդիրը չի վճռում: Լիւկկէի կարծիքով Յուստինոսը առաքեալների անմիջական ունկնդիրներից չէր, և յայտնի էլ չէ, թէ ունէր որ և է յարաբերութիւն այնպիսի առաքելական անձանց հետ, որպիսի են Պողիկարպոս Զմիւռնացին և Պապիաս Յերապոլսեցին, որ այդ աղբիւրից վեր առնուէր արժանահաւատ տեղեկութիւն Յայտնութեան գրողի մասին: Նրա եփեսոսութւմ լինելը դեռ չի ապացուցանում, թէ նա այնտեղ Յայտնութեան ուսումնասիրութեան մասին յատուկ ջանք է գործ դրել: Շատ կարելի է, որ եփեսոսութւմ նա իւրացրեց Յայտնութեան մասին այն հայեացքը, թէ այն Յովհաննէս առաքեալի իսկական գործն է, բայց ոչ որ և է քննական հետազոտութեամբ, այլ սովորական մեկնական տեսութեամբ. այսինքն յոսկանալով Յայտնութիւնը ներկայացնել որպէս Յովհաննէս առաքեալի գործ: Վերջ ի վերջոյ, ինչ-

Թիւնների մէջ չմտնելով կարելի է ընդունել, որ Յայտնունութեան մասին Յուստինոս Փիլիսոփայի վկայութիւնը անաչառ նշանակութիւն ունի, եթէ միայն այն յենուում է պատմական աւանդութեան վերայ և հանդիսանում է ընդհանուր համոզման անտարակուսելի արտայայտիչը այն ժամանակի եկեղեցական շրջանի՝ որի մէջ ել և մուտ ունէր Յուստինոսը: Նրա քրիստոնիական համոզմունքը չպէտք է մինչև անգամ ստուեր ձգի նրա տեղեկութեան, պատմական բնոյթի և արժանահաւատութեան վերայ: Յուստինոսը կարող էր քրիստոնի խիստ հետևող լինել առանց Յայտնութեան էլ, որովհետև Հին Կտակարանի մարգարէութիւնները, որոնք տառացի էին հասկացուում, շատ հարուստ պաշար էին տալիս քրիստոնիական վարկումներին:

Հետաքրքիր է Ռոտտիգի ջանքը ապացուցանելու, «*εἰς τὸν ἀποστόλων ἑρμῆον*» խօսքի յետնագոյն յաւելումն, Յուստինոս Փիլիսոփայի վերև յիշուած վկայութեան մէջ և այդ ենթադրութեան վերայ հիմնուած՝ «*ἀντὶ τῆς*» բառերը ընդունում է յօգուտ Յովհաննէս Երեցի և ոչ Յովհաննէս առաքեալի: Բայց այս առարկութեան անկայունութիւնը չափազանց ակնբեր է, և չարժէ քննելու համար շատ տեղ նուիրել¹⁾: Բաւական տարօրինակ և անորոշ «*ἀντὶ τῆς*» արտայայտութիւնը բացատրելու համար պէտք է մատնանշել այն փաստը որ դիւալօզը—տրամախօսութիւնը—կատարւում էր հրէայ Տրիփոնի հետ, որը չէր ընդունում Յովհաննէս առաքեալի հեղինակութիւնը:

Դիւալօզի 81-րդ գլխում բացի Յայտնութեան վերայ յիշեալ պարզ ցուցումից, Յուստինոս Փիլիսոփայի հենց նոյն դիւալօզում շատ անգամ են հանդիպում այլ նսեմ

պէս ընդունում է և ինքն Լիւկկէն (Einleit. I Aufl. S. 278), ստացւում է բոլորովին բացասական եզրակացութիւն: Եթէ չկայ բաւականին հիմք ս. Յուստինոսի վկայութեանը առարկայական նշանակուելութիւն տալու, չկայ և հիմք հակառակն հաստատելու:

1) Մանրամասն բացատրութիւն և հիմնաւոր քննական վերլուծութիւն Ռոտտիգի առարկութիւնների տես առ Լիւկկէ, op. cit I Aufl. S. 273—283. 2, Aufl. S. 553 ff. հմտ. Bousset, op. cit. S. 13, Anm.

ակնարկներ ու զիմուքներ մեր զրքի վերայ: Այսպէս, զիւրօղի 45 զլիւում Յուստինոսը բանասարկուին անուանում է «ὁ πονηρευσάμενος τὴν ἀρχὴν ὄφιν», ուր ակամայ լւում է Յայտնութեան յիշած սատանայի անուանների ձայնը (Հմտ. Յայտն. 12, 9 և 20, 2): Ա. Յուստինոսի խօսքերը նոյն զլիւում Քրիստոսի երկրորդ գալստեան ժամանակ մահուան բացարձակ ջնջման մասին նրանց համար, որոնք հաւատում են Քրիստոսին և վարում են աստուածահաճոյ կեանք՝ յիշեցնում է Յայտն. 20, 14 և 21, 4. տեղերը:

Մեղաւորների յաւիտենական դատապարտութեան պատկերացումն պարզ է, որ հիմնուած է Յայտնութեան 14, 11. Իսկ արգարների երանութեան պատկերացումը Յայտնութեան 21, 4: Յուստինոս Փիլիսոփան իւր զիւրօղի 113 զլիւում Քրիստոսի մասին այսպէս է խօսում. «Դա Ա. յն է, Որի մէջ և Որով Աստուած նորոգեց երկինք ու երկիրը» (Հմտ. Յայտ. 21, 5.), և շարունակում է, «Դա Ա. յն է, Որը լինելու է լոյս, ինչպէս յաւիտենական լոյսը, Երուսաղէմում» (Հմտ. Յայտն. 21, 32 և 22, 5): 117 զլիւում խօսւում է արգարների փայլուն հանդերձների մասին (λευκαί στολαί), ուր կարելի է տեսնել յայտնի ակնարկութիւն Յայտնութեան վերայ (7, 9, 13 և 19, 8): Յուստինոս Փիլիսոփայի միւս շարադրութիւնների մէջ էլ կարելի է նկատել Յայտնութեանը նրա ծանօթ լինելը, Իւր առաջին ջատագովութեան մէջ (զլ. 28.) Յուստինոսը ասում է, «Մենք չար դեւերի առաջնորդին սատանայ և բանասարկու ենք կոչում, որ կարող էք իմանալ՝ քննելով մեր զրքերը: Իսկ բոլոր սուրբ զրքերից միայն Յայտնութեան մէջ է բանասարկուին վերոյլշեալ անուանը տրուել¹⁾» (Յայտն. 12, 9. 20, 2):

Յոյց տրուած բոլոր օրինակներից, ակնարկութիւններից, նմանութիւններից և համեմատութիւններից անտարակոյս հետեւում է որ Յուստինոս Փիլիսոփան Յայտնութեան

1) S. S. Tiefenthal, Die Apocal. des heiligen Johannis, S. 14 f.

Թիւնը համարում էր սուրբ գիրք և վերագրում էր Յովհաննէս առաքեալին: Առաջին հայեացքով տարօրինակ է թուում այն փաստը, որ Յովհաննէս առաքեալի հեղինակ լինելու մասին նա խօսում է միայն իւր դիալոգի 81 գլխում և իւր միւս շարադրութիւնների մէջ բնաւ չի յիշում: Բայց եթէ ուշ դարձնենք նրա՝ Նոր Կտակարանից առաջ օրինակների վերայ, ընդհակառակն մեզ անսովոր կերևի այն հանգամանքն ու որոշութիւնը, որից նա, մէջ բերած տեղում խօսում է Յայտնութեան հեղինակի մասին: Յուստինոսին, անկասկած, յայտնի էին թէ Պօղոսի թղթերը և թէ Յովհաննու աւետարանը, բայց նա ոչ մի տեղ իւր շարադրութիւնների մէջ նրանց դիմումն չէ անում, թէ և նրա աստուածաբանական լեզուն և մտքերի ձևակերպութիւնը պարզ են թաղրել են տալիս, որ հիմնուած են Պօղոս և Յովհաննէս առաքեալների գրուածքների վերայ: Ընդհանրապէս պէտք է նկատել, որ համեմատելով Հին Կտակարանի բազմաթիւ օրինակների և հեղինակութիւնների հետ, որոնց ամեն քայլափոխում հանդիպում ենք նրա երկերի մէջ, Նոր Կտակարանի գրուածքները շատ համեստ տեղ են բռնում: Այս հանգամանքում բաղդաւոր է Յայտնութիւնը, որ Յուստինոս Փիլիսոփայի երկերի մէջ Նոր Կտակարանի միւս գրքերի համեմատութեամբ յայտնի տեղ է բռնում: Պէտք է կարծել, որ հենց այս հանգամանքն առիթ է տուել երանելի Յերոնիմոսին (*De vir. illustr. c, 9*) կարծիք յայտնել, որպէս թէ Յուստինոս Փիլիսոփան մեկնութիւններ է գրել Յայտնութեան մասին¹):

1) Երանելի Յերոնիմոսի խօսքերը, որ հաստատուում են Եւսեբիոս Կեսարացու զատկական ժամանակագրութեամբ՝ շատ տարակոյսներ և փորձեր են առաջ բերում, ի նկատի ունենալով անվիճելի փաստը, պարզելու թէ ոչ Յուստինոս Փիլիսոփան, և ոչ Իրենէոս Լիոնացին, որին նոյնպէս յիշում է երանելին Յերոնիմոս, Յայտնութեան մասին մեկնութիւն չեն գրել: Խորամուկ չլինելով այս խնդրի առիթով բանավէճի բոլոր մանրամասնութիւններին ու դարձուածներին, որոնց կարելի է ծանօթանալ Լիւկկէի գրուածքից (*Einleit. I Aufl. S. 284—287. 2, Aufl. S. 558 ff. հմտ. Bousset. op. cit S. 13*),

Մուրատեան հասուածի վկայութիւնը:—Յայտնութեան կանոնական հեղինակութեան և առաքելական ծագմանն յօգուտ՝ կարևոր վկայութիւն ենք դնում Մուրատեան կոչուող հատուածի մէջ, որ ունի նոր կտակարանի գրքերի անունը՝ Պիոս I պապի օրից (139—155 թ.): Այդ ցուցակը աւելի մեծ նշանակութիւն ունի և նրանով, որ հռովմէական եկեղեցու նոր կտակարանի կանոնը հասցնում է մինչև քրիստոնէական II դարի մօտ կէտը: Այդտեղ Յայտնութիւնը երկու անգամ է յիշուած. առաջին անգամ Պօղոս առաքեալի (I և II Կորնթ. և Թեսսաղ. I և II) թղթերից յետոյ, ծանօթութեամբ, թէ թէ և հեթանոսների առաքեալի թղթերը ուղղուած են մասնաւոր եկեղեցիներին, սակայն բոլոր եկեղեցիներին համար էլ նշանակութիւն ունեն, Յովհաննէս առաքեալի Յայտնութեան մէջ փոքրասիական 7 եկեղեցիներին ուղղած թղթերի պէս¹⁾. երկրորդ անգամ Յայտնութիւնը բոլորովին անկախօրէն է յիշուած²⁾:

Եփեսոսի եպիսկոպոս Պողիկրատէս:—Եփեսոսի եպիսկոպոս Պողիկրատէսը, որ ապրում էր II դարի երկրորդ կիսին, հռովմի եպիսկոպոս Վիկտորին և նրա եկեղեցուն³⁾ գրած իւր թղթում թոյլ է տալիս մեզ ենթադրել թէ նա մօտիկ ծանօթ էր Յովհաննէս առաքեալին վերագրուած Յայտնութեան բովանդակութեան հետ: Այստեղ նա ի միջի այլոց խօսում է մեծ ննջեցեալների մասին, որոնք մի ժամանակ երբ կենդանի էին, զարդարում էին փոքրասիական եկեղեցին, և այժմ սպասում են Տիրոջ երկրորդ գալստեանը: «Սրանց

նկատենք միայն, որ այդպիսի արտայայտութեան փաստը ինքն ըստ ինքեան չառ նշանակալից է, և հարկադրում է մեզ կարծել, որ եթէ Յուստինոս փիլիսոփան նոյն իսկ չի էլ գրել Յայտնութեան մասին մեկնութիւն, յամենայն դէպս, նրան նուիրել է աւելի մեծ ուշադրութիւն քան նոր կտակարանի միւս գրքերին, ի հարկէ, խորը համոզուած, թէ գործ ունի Յովհաննէս առաքեալի իսկական երկի հետ:

1) Et Johannis enim in apocalypsi licet septem ecclesiis scribat, tamen omnibus dicit.

2) Apocalypse etiam Johannis, տես Tiefenthal op. cit. S. 15.

3) Տես Euseb. Hist. Eccles. III, 31 և V, 24.

(այսինքն մեծ ննջեցեալների) թուին է պատկանում Յովհաննէսը, որ հանգեաւ ի ծոց Տեառն, սա երէց էր, կրում էր քահանայապետական ուրիմմը, վկայ և ուսուցիչ, որ ննջեց Եփեսոսում։ Պողիկրատէս եպիսկոպոսի առաջ բերած խօսքերում, առաջին տեղը բռնում է Յովհաննէս առաքեալի գրական գործունէութիւնը. նա նրա մասին խօսում է որպէս 4-րդ աւետարանը կազմողի մասին, որ հանգեաւ ի ծոց Տեառն։ Որպէս կաթողիկեայց թղթերի հեղինակ՝ Յովհաննէս առաքեալը ուսուցիչ է կոչւում (I Յովհ. Բ. 1, 12, 18, 28; Ե. 21. և III թղթի ամբողջ ոճը), վերջապէս, որպէս Յայտնութեան գրքի հեղինակ նրան վերագրւում է երէցի կոչում, որը թոյլ էր տալիս քահանայապետի ուրիմմ կրել։ Պողիկրատէսի մէջ բերուած խօսքերի այսպիսի պատկերաւոր հասկացողութիւնը արդարանում է տրամադրութեան ընդհանուր բարձրութեամբ և ամբողջ թղթի հանդիսաւորութեամբ։ Դեռ աւելին կայ. այն բղխում է վերջին խօսքը տառացի կերպով հասկանալ չկարողանալու անհրաժեշտութիւնից, որպէս թէ Յովհաննէսը քահանայապետի փաթոյթը ճակատին կրող երէց էր։

«Վկայ» (μαρτυς) բառը, որ անմիջապէս հետևում է դրան, լոյս է սփռում այս ամբողջ պատկերաւոր խօսքի վերայ։ Յայտնութեան Ա. 2, 9, Յովհաննէս առաքեալը իրան վկայ է անուանում, որ քրիստոնէական մտքով նշանակում է տանջանքների համբերութիւն Աստուծոյ խօսքի և Յիսուսի Քրիստոսի համար, որ Հաւատարիմ և ձշմարիտ Վկայ է*) (Յայտ. Ա. 5). և պարզ մատնանշում է առաքեալի Պատմութեան աքսորն և նրա հետ կապուած՝ Աստուծուց յայտնութիւն ստանալը։ Իսկ երկրի վերայ Աստուծոյ թագաւորութեան ապագայ խորհուրդների յայտնութիւնը արդէն ինքն ըստ ինքեան Յովհաննէս առաքեալին տուել էր քահանայապետական սպասաւորութեան երկու կարևոր առաւելութիւնները, այն է, Աստուծուն մօտ լի-

*) Հայերէն. «Ե Յիսուսէ Քրիստոսէ հաւատարիմ վկայն»։

նելը և ապագայի կանխագուշակութիւնը: Ինչպէս միայն քահանայապետն էր կարող մտնել Սրբութիւն սրբոց, այնպէս էլ միայն Յովհաննէս առաքեալը ընդունակ հանդիսացաւ բարձրանալ երկինք և այնտեղ Աստուծոց յայտնութիւն ստանալ (Յայտ. Դ. 1.): Ինքն Աստուած երևում է նրան (Յայտն. Ա. 17—18). նա հրեշտակների հետ յարաբերութեան մէջ է մտնում, որոնք նրան իրանց ծառայակից են կոչում (Յատն. ԻԲ. 9.):

Այնուհետև որպէս քահանայապետը Իսրայէլի թշուառութեան դժուարին տարիներում իւր կրծքին կրած ուրիմմով*) ու տումմիմով (Թիւք Իէ. 21.) կարողանում էր Աստուծոց իմանալ ապագան, այնպէս էլ Յովհաննէս առաքեալը քրիստոնեաների համար դժուարին տարիներում մարգարէանում է եկեղեցու ապագայ յաղթանակը:

Եփեսոսի Պողիկրատէս եպիսկոպոսի վկայութիւնը մեր համար աւելի կարեւոր է և նրանով, որ նա կարեւոր է համարում փոքրասիական եկեղեցու կատարեալ համակամութիւնը Հռովմայ եկեղեցու հետ նոր Կտակարանի կանոնի խնդրում ընդհանրապէս և Յայտնութեան մասին ի մասնաւորի: Մուրատուրեան հատուածը, յիշուի, հաստատում է վերև յիշուած եկեղեցիների այդպիսի համակամութիւնը¹⁾:

Բ. զարի երկրորդ կէսից սկսած Յայտնութիւնը որպէս կանոնական հեղինակութիւն՝ եկեղեցում զործադրուելու հետքերը, վկայութիւններն ու ղիմումներ հետզհետէ դառնում են աւելի յաճախակի, որոշ, ճշտագոյն և աներկբայ: Քրիստոնէութեան Բ. զարի երկրորդ կիսից ընդհանրական եկեղեցին սկսում է անողոք կռիւ մղել հերետիկոսութեան դէմ: պահանջը, որ նոր Կտակարանն էլ Հնի պէս սուրբ և կանոնական համարուի, անհրաժեշտութիւնը, որ բացատրուի, ապացուցուի նրա իսկական և անաղարտ լինելը

*) Հայերէն. «Իրաւունք յայտնութեան».—«Յանդիմանութիւն և ճշմարտութիւն» (Ղևտ. Ը. 8).

1) S. Tiefenthal, op. cit. S. 16 t.

ընդդէմ հերետիկոսական թերահաւատութեան և հերձուածողներին, որոնք ի չարն էին գործ դնում, շատ և շատ զգալի էր դարձել: Ըստ այսմ էլ, քրիստոնէական կեանքն ու նրան զուգընթաց աստուածաբանական արտայայտութիւնները երեւան էին գալիս նոր նոր հակասութիւններով, անհրաժեշտութիւնը ի մի հաւաքել քրիստոնէական բոլոր գրուածքները, ուր որոշուած լինէին քրիստոնէական կեանքի ու մտածութեան գլխաւոր երեւոյթների ընդհանուր բանաձեւերն և տրուած լինէին առաքելական հեղինակաւոր վճիռներ, համարւում էր շատ կարեւոր և անյետաձգելի: Դրա համար էլ եկեղեցու ըմբռնումները մշակելու և քրիստոնէական ճշմարտութեան սուրբ կանոնի ճիշտ սահմանը որոշելու համար սկսւում է եկեղեցու միահամուռ աշխատութիւն:

Ի մասնաւորի Յայտնութեան վերաբերութեամբ հետաքրքրութիւնը զօրանում էր քիլիաստական և մոնտանական*) շարժմամբ, որի դէմ եկեղեցին անողոք կռիւ էր մղում սկսած Բ. դարի երկրորդ կիսից: Արդէն Յուստինոս Փիլիսոփայի քիլիազմը առաջ բերեց մեծ հետաքրքրութիւն դէպի Յայտնութիւնը: Աւելի ևս բացերեւ է դառնում հետաքրքրութիւնը դէպի Յայտնութիւնը, երբ Մոնտանիզմի պատճառով քրիստոնէական եկեղեցում սուր կերպարանք է ստանում շնորհների և մարդարէութիւնների հարցը: Աւելի և աւելի են դիմում Յայտնութեանը՝ ցուցումների

*) Բ. դարում Փոփուգիսում երեւան եկած հերետիկոսութիւն, որ մոնտանական է կոչւում նոյն դարում ապրող և հերետիկոսութեան հեղինակ Մոնտանոսի անունով: Մոնտանոսը ամբաստանում էր որպէս իրան միսիթարիչ և ամենակարող Հայր կոչող: Բայց իսկապէս նա քարոզում էր, թէ ս. Հոգու խոստումը միայն առաքելներով չէ սահմանափակուել, այլ խոստումն լրիւ կատարուած չլինելով, այժմ բոլորովին կատարուել է իւր—Մոնտանոսի և իւր հետևողուհիների—միջոցով: Մոնտանականները ասում էին թէ հրէութիւնը տղայութիւնն էր, նոր կտակարանը՝ պատանեկութիւնը, իսկ Միսիթարիչի (Պարակլիտ) ուխտը՝ հասուն հասակը (Մոնտանոսի համար տես Եւս. Կես. Պատմ. եկեղ. գորութիւն Դ. զլ. Իէ: Դպր. Ե, զլ. Գ. ԺԴ: ԺԶ):

և բացատրութիւններէ համար. երկու վիճող կողմերն էլ աշխատում են շահագործել նրան յօգուտ իրանց: Այս պատճառով էլ Յայտնութեան մասին եկեղեցական աւանդութիւնը, համեմատութեամբ նոր կտակարանի միւս զըրքերի, դառնում է աւելի հետաքրքրական և ուսանելի, բայց և աւելի շփոթ, և պատմական քննադատութեան համար շատ անգամ մեծ դժուարութիւն է յարուցանում:

Իւր ծննդավայրում—Փոքր-Ասիայում—Յայտնութիւնը Բ. դարի երկրորդ կիսին վայելում է ընդհանուր յարգանք և անվիճելի հեղինակութիւն յատկապէս մոնտանիստների շրջանում¹⁾:

Սարգիսցի Մելիսսնի վկայութիւնը.—Այս ժամանակ այսինքն Բ. դարի երկրորդ կիսին պէտք է վերագրել քրիստոնէութեան յայտնի ջատագովի և Յայտնութեան 7 եկեղեցիներից մէկի ներկայացուցչի—Մելիտոն Սարգիսցու (+ շուրջ 185 թ.²⁾) վկայութիւնը: Իւր, առ Հռովմայ Վիկտոր եպիսկոպոսը գրած երկրորդ թղթում Պողիկրատէս եփեսոսցին յիշում է երեւելի այր Մելիտոնին, որը «իւր բոլոր ընթացքում եղել է լի Հոգւով սրբով և հանգչում է Սարգիում սպասելով երկնքի այցելութեանն ու մեռեալների յարութեանը»: Եւսեբիոս Կեսարացու վկայութեամբ (եկեղ. պատմ. Դ. 26) Սարգիսցի Մելիտոնը ոչ միայն արդիւնաւոր գրող էր, զգայուն իւր ժամանակի տիրող հետաքրքրութեանն ու հարցերին, այլ և իւր դարի ամենափորձուած հետազօտողների թուին էր պատկանում: Բայց մենք ի զուր կսպասէինք նրանից պարզ և որոշ վկայութիւն յօգուտ Յայտնութեան: Այն ամենը ինչ որ այս խնդրի առիթով ունենք նրանից սահմանափակում է Եւսեբիոս Կեսարացուց (եկեղ. պատմ. Դ. 26) և, անկասկած, նրան հետևող երան. Յերոնիմոսից (De vir. illustr. cap. XXIV), գրուած տեղեկութեամբ, թէ Մելիտոնը Յայտնութեան մասին գիրք է գրել³⁾:

1) S^h Bousset, op. cit. S. 13. Anmerk. հմտ. Zahn, Gesch. des Kanons I, S. 205.

2) Ըստ երան. Յերոնիմոսի Մելիտոն Սարգիսցին երկու, բոլորովին անկախ, չարադրութիւն ունի:

3) «De diabolo librum unum, de apocalypsi Johannis librum unum»...

Բայց նրանք ոչինչ չեն ասում մեզ այդ զրքի բովանդակութեան մասին, և թէ ինչ է ասուած այնտեղ Յայտնութեան զրոգի համար: Առաջ բերուած համառօտ նկատողութիւնից, յամենայն դէպս, երևում է որ եթէ Մեղիտոնը Յայտնութիւնը վերագրում է Յովհաննէսին, առանց որ և է մանրամասնութեան¹⁾, անկասկած Յայտնութեան Յովհաննէսի անուան տակ, նա, իւր ժամանակի օգոյսութեան համեմատ, ենթադրում է Յովհաննէս առաքեալին, և ոչ թէ մի այլ Յովհաննէսի—որ երէց էր: Եթէ Մեղիտոնը այս վերջինիս համարէր Յայտնութեան հեղինակ, պէտք է որ աւելի որոշ և ճշդիւ արտայայտէր. բացի զրանից, այդ չէր վրիպի Կեսարացի պատմչի զիտող հայեացքից, որ այնքան զգայուն և ուշադիր էր այն ամենին, որ, թէև մասամբ, վերաբերում լինէր Յովհաննէս երէցի անձին: Մինչդեռ Եւսեբիոսի զրքում մենք ամենափոքր ակնարկ անգամ չենք նկատում: Որովհետև իւր աստուածաբանական կրթութեամբ և ուղղութեամբ Մեղիտոնը պատկանում է Պապիասի ու Պողիկարպոսի աշակերտների շրջանին, ուրեմն, անկասկած, հենց այդ մի հատիկ պատճառով էլ նա պէտք է նայէր Յայտնութեան վերայ յարգանօք և նրանից, որպէս կանոնական զրքից, օգտուէր:

Ս. Թէոփիլոս Անտիոքացի:—Եւսեբիոսի վկայութեամբ (Եկեղ. պատմ. Դ. 24), մօտաւորապէս Բ. դարի վերջին զրեց Անտիոքի եպիսկոպոս Թէոփիլոսը († 168—181 թ.) իւր վիճաբանական զիրքը ընդդէմ Հերմոգենէսի հերետիկոսութեան: Ս. Թէոփիլոսի՝ շարադրութիւնը այժմ կորած է, բայց նրան կարգացած Եւսեբիոսը յայտնում է, որ իւր շարադրութեան մէջ Թէոփիլոսը օգտուել է Յովհաննէս Յայտնութեան վկայութիւններով: Եւսեբիոսը «Յովհաննէս Յայտնութիւն» ոճը գործ է ածել, ի հարկէ, Թէոփիլոսի մտքով և ենթադրում է, որ վերջինս Յովհաննէս անուամբ ի նկատի ունի Յովհաննէս առաքեալին, որովհետև հակա-

1) Նայն ինքն Յայտնութեան զրոգը իրան պարզօրէն «Յովհաննէս» է կոչում. փստա՜ լինելով, որ բնթերցողները կրմբոնեն նրան ինչպէս հարկն է (Յայտ. Ա. 1, 4, 9, ԻԱ. 2, ԻԲ. 8):

ուակ դէպքում նա աւելի պէտք է որոշէր ու ճշդէր:

Հաւանօրէն մոնտանական հերետիկոսների դէմ վիճաբանական գրուածքի մէջ Յայտնութիւնը կիրարկելու փաստից կարող ենք եզրակացնել, որ ինքն թէոփիլոսը ենթադրում էր, որ այն արդէն, եթէ ոչ ընդհանուրից, գոնէ շատերից ընդունուած էր որպէս նոր կտակարանեան հեղինակութիւն: Վիճաբանական գրուածքի մէջ յենուելը Յայտնութեան վերայ, յօգուտ այն յարգանքի է, որը վայելում էր Յայտնութիւնը մինչև անգամ նոյն ժամանակի հերետիկոսական շրջաններում, որը ապացուցանում է թէ նրանք էլ համոզուած էին որ նրա հեղինակը Յովհաննէս առաքեալն է: Ս. թէոփիլոսի ձայնը, որպէս եկեղեցական վարկումի արտայայտիչի և պաշտօնական ներկայացուցչի ձայն, յամենայն դէպս երաշխաւորում է մեզ այն, որ ինքն թէոփիլոսն ու իւր ժամանակի եկեղեցին յարգում էին Յայտնութիւնն ու օգտւում էին նրանից, որպէս Ս. Գրքից: Շատ հաւանական է, որ թէոփիլոս Անտիօքացու ինչպէս և Յուստինոս Նահատակի յարգանքն ու Յայտնութիւնից օգտուելը կապ ունէր այն վստահութեան հետ, թէ նրա հեղինակը Յովհաննէս առաքեալն է: Եթէ ճշմարիտ է, որ առ Աւտղիկոսը գրած թղթում (Բ. զլ. 28) Ս. թէոփիլոսը տկնարկ է անում Յայտնութեան վերայ ԺԲ. 3 և 9, ապա ուրեմն այդ միայն նոր ապացոյց է Յայտնութեան ընդարձակ ծաւալ ունենալուն և այն ազդեցութեանը, որ նա սկսել էր ցոյց տալ աստուածաբանական լեզուի ու քրիստոնէական մտքի արտայայտութեան վերայ:

Ապոդոնիոս փոքասիացու վկայութիւնը:—Մեր համար շատ կարեւոր է թէոփիլոս Անտիօքացու կրտսեր ժամանակակից Ապոդոնիոսի վկայութիւնը, որ (Ապոդոնիոսը) ըստ Եւսերիոս Կեսարացու (Եկեղ. պատմ. Ե. 18) ապրում էր Փոքր Ասիայում Բ. դարի վերջին ու Գ. դարի սկզբին և իրանից յետոյ թողեց վիճաբանութեան զիրք հակամոնտանական ուղղութեամբ¹⁾: Այստեղ նա վկայութիւն է բե-

1) Lücke (Einleit., 2 Aufl. S. 567) յենում է «Liber praedestinitatus» (26) և պնդում է, թէ Ապոդոնիոսը եփեսոսի երէց էր:

րում Յայտնութիւնից և աւանդում է նրա հեղինակ Յովհաննէս առաքեալի մասին, թէ եփեսոսում նա մեռեալներ էր յարուցանում աստուածային զօրութեամբ: Առաջ բերած տեղեկութեան մէջ կարեւոր է այն, որ Ապողոնիոսը մոնտանականների դէմ շարադրութեան մէջ չի վախենում յենուել Յայտնութեան վերայ. մոնտանականները, ինչպէս յայտնի է, ի չարն էին դործ դնում մեր գրքի խորհրդաւոր բովանդակութիւնը իրանց աղանդաւորական շահերում: Այստեղից առաջ է գալիս, որ Ապողոնիոսը, անկասկած, խոստովանում էր Յայտնութեան աստուածային զրուածք լինելը և վերագրում էր այն Յովհաննէս առաքեալին, որի մասին խօսում է յետոյ Եւսեբիոս Կեսարացին՝ Ապողոնիոսի զրուածքից մէջ բերած քաղուածքի մէջ: Ընդհանրապէս պէտք է նկատել, որ այն ժամանակին նոր կտակարանի վկայութիւնները առաջ էին բերւում միայն այն դէպքում, երբ նրանց իսկական և սուրբ էին համարում: Եթէ Ապողոնիոսը ընդունէր թէ Յայտնութեան հեղինակը առաքեալից ջոկ մի ուրիշ Յովհաննէս է եղել, ապաքէն Եւսեբիոս Կեսարացին, անկասկած, կը նկատէր իւր եկեղեցական պատմութեան մէջ:

Ս. Իրենէոս Լիոնացու վկայութիւնը. — Յայտնութեան ծագման և կանոնական արժէքի հարցի վերաբերութեամբ երկրորդ դարի ամենակարեւոր և հեղինակաւոր վկան, անկասկած հանդիսանում է Ս. Իրենէոս Լիոնի եպիսկոպոսը. († 202 թ.), որը և Պոթինոսի եպիսկոպոսական աթոռի յաջորդն էր: Որպէս Ս. Պողիկարպոսի մերձաւոր աշակերտ՝ նա ամենամօտ յարաբերութեան մէջ էր փոքրասիական եկեղեցիների հետ և առաքելական անձանց աշակերտների անդրանիկ սերնդին էր պատկանում (Եւս. եկեղ. պատմ. Ե. 20): Իւր արեւելքից արեւմուտք յաճախակի ճանապարհորդութիւնների ժամանակ նա տեսաւ քրիստոնեայ երկրների մեծ մասը, և դրա համար էլ նրա ձայնը մեր համար առանձին նշանակութիւն և գին ունի:

Իրենէոս Լիոնացին, անկասկած, համարում էր Յայտնութիւնը Յովհաննէս առաքեալի Աստուածաշունչ արտա-

դրութիւն. բայտ այսմ, ուշադրութեամբ անսալով եկեղեցական աւանդութեան ձայնին, նա մեր գրքի իսկական լինելու դէմ ոչ մի առարկութիւն չգիտէ դնու: Բայց Յայտնութիւնից, նա Յովհաննէս առաքեալին է վերագրում չորրորդ աւետարանն ու Ընդհանրական (Կաթողիկէայց) թղթերը (Adv. haer. II, 22; III. 1, 1; III. 3, 4; 11, 1; V, 30, 1. 3): Իւր «Adversus haereses» շարադրութեան մէջ (Հմտ. եւս. եկեղ. պատմ. Ե. 18) Իրենէսուր շատ յաճախ է յենեում Յայտնութեան վերայ և նրանից երկար կտորներ ամբողջովին մէջ է բերում¹⁾: Իրենէոսի՝ Յայտնութիւնը կիրարկելու բնոյթից հետեւում է, որ նա շատ է յարգում այս գիրքը, և իւր մերձաւոր ընթերցողների շրջանում համարում է նրա կանոնական արժանիքը անտարակուսելի:

Ս. Իրենէսուր իւր վերեւ յիշուած գրութեան 4, 20 գրութեամբ, ի միջի այլոց ասում է, որ Աստուծոյ խօսքը առաջ արդէն յաճախ յայտնում էր արժանաւոր անձանց, որին վկայում են Հին Կտակարանի գրքերը (Երկրորդ Օրէնք, Եւք. Գ. Թագաւորութեանց, Եղեկիէլ, Գանիէլ): Բայց, ասում է նա, Տիրոջ աշակերտ Յովհաննէսը, որ Յայտնութեան մէջ տեսաւ նրա թագաւորութեան փառաւոր ժամանումն, ասում է. «Դարձայ... (շարունակում է մէջ բերել Յայտնութիւնից Ա. 17 և այլն):— Յայտնութեան յօրինող Յովհաննէսին ու Աւետարանիչ Յովհաննէսին Իրենէսուր մի և նոյն անձն է համարում, որը ակներեւ է Յովհաննէս անունը յաճախակի, առանց այլ ևս բացատրութեան, կրկնելուց:

Մեր համար յատկապէս կարեւոր է Իրենէոսի Adversus haereses (Ե. 30) շարադրութեան այն տեղը, ուր նա խօսում է Յայտնութեան սուտ քրիստոսի 666 թուի մասին: Կեսարացի պատմիչն էլ (Եկեղ. պատմ. Ե. 18) արդէն այստեղի վերայ ուշադրութիւն է դարձրել: Այստեղ Իրենէոսը

1) Op. cit. IV, 13, 50. v, 30, 35. «Johannes vidit in Apocalypsis»—«Johannes ait»... սովորաբար այսպէս են սկսում քաղուածները Յայտնութիւնից. Հմտ. Zahn, Gesch. d. Kanons. I. S. 202, Anm. 2.

պաշտպանում է 666 թիւը և ապացուցանում է նրա ըստ ամենայնի, Հին Կտակարանի համանման լինելը, իսկ 616 թիւը որը մեր գրքի մի քանի ընդօրինակութիւնների մէջ կայ համարում է ոչ-ճիշդ: Նա հաւատացնում է, որ 666 թիւը գտնւում է բոլոր հնագոյն և արժանահաւատ ձեռագրերում և յօգուտ իրան ունի վկայութիւնը նրանց՝ «որոնք Յովհաննէսին անձամբ ճանաչում էին»¹⁾: Իւր կողմից նա չի համարձակւում վճռապէս մի բան ասել, որովհետեւ եթէ սուտ քրիստոսի անունը հարկ լինէր հռչակել ի լուր ամենեցուն, ուրեմն անկասկած այդ կանէր նա, ով տեսել էր Յայտնութիւնը, այսինքն Յովհաննէսն ինքն: Վերջինս տեսաւ Աստուծուց նրան տրուած յայտնութիւնը՝ «դրանից ոչ շատ ուշ»՝ այսինքն «Դոմեստիանոսի Թագաւորութեան վերջին»²⁾: Այս քաղուածից ամենից առաջ այն է իմացւում, որ Իրենէոսի ժամանակին կային Յայտնութեան շատ ձեռագիր արտագրութիւններ, որոնց մէջ կարելի էր ջոկել հնագոյններն ու ճշգրտոյնները յետագոյններից ու անճիշդներից: Բացի սրանից, Իրենէոսի ժամանակակիցներից շատերը զբաղւում էին Յայտնութեան մեկնութիւնով, և նրա խորհրդաւոր ու վերացական գաղտնութեամբ լի բովանդակութիւնը յառաջ էր բերել շատ ու շատ հետաքրքրութիւն: Եթէ զազանի 666 թուի ճշգրութեան համար ս. Իրենէոսը յենւում է նրանց վկայութեան վերայ, որոնք «անձամբ ճանաչում էին Յովհաննէսին», ուրեմն, ի հարկէ, դրանով նա ենթադրում է Յայտնութեան առաքելական ծագումն: Յայտնութեան առաջին ընթերցողների նեղ շրջանակում այսինքն փոքրասիական եկեղեցիներում սուտ քրիստոսի անունն խորհրդաւոր թուի իսկական նշանակութիւնը, շատ հաւանական է, յայտնի էր: Ինքն ս. Իրենէոսը նոյն շրջանի հետ շատ մօտ յարաբերութեան մէջ էր: Նա ծննդեամբ փոքրասիացի էր, մեծացել էր ս. Յովհաննէս առաքեալի անմիջական ունկնդիր

1) Հմտ. Bousset, Offenb. Joh. 1896. S. 12.

2) «Πρός τῷ τέλει τῆς Δομειτιανοῦ ἀρχῆς»...

Պողիկարպոս Զմիւռնացու մօտ. շատ լաւ զիտէր Յովհաննէսի շրջապատ կոչւող փոքրասիական աւանդութիւնը, քրիստոնէական սուրբ կանոնը պաշտպանելու և կեղծ գրուածքներից ու հերետիկոսական պարականոնութիւններից զերծ պահելու համար նա շատ և լրջօրէն է զբաղւում նոր Կտակարանի գրքերի ուսումնասիրութեամբ: Արևելեան և արևմտեան եկեղեցիներում նրա ծանօթութիւնների ընդարձակ շրջանը, եկեղեցական հասարակական ընդարձակ գործունէութիւնը, նրա խորին հետաքրքրութիւնը դէպի աստուածաբանական վերացական վէճերն ու եկեղեցական կեանքում տեղի ունեցող հակասութիւնները, — այս բոլորը միասին առած մեզ իրաւունք են տալիս ենթադրել, թէ ս. Իրենէոսի վկայութիւնը Յայտնութեան առաքելական ծագման մասին իւր անձնական հաւաստիացումն չէ միայն, այլ հիմնւում է պատմական հաստատուն հիմքերի վերայ: Թէև նա ոչ մի տեղ մեզ հաշիւ չէ տալիս այս հիմքերի մասին, բայց շատ հաւանական է, որ այս դէպքում նա հետևում էր իւր դարի և Յուստինոս փիլիսոփայի պէս անձանց օրինակին: Ս. Իրենէոսին դեռ յայտնի չէ որ և է առարկութիւն Յայտնութեան իսկականութեան և նրա կանոնականութեան դէմ, դրա համար էլ նրա գրքուածքի մէջ չի նկատւում քննական առանձին զգուշաւորութիւն եկեղեցական աւանդութիւնների վերաբերութեամբ¹⁾: Բայց, Յայտնութեան մասին աւանդական հայեցքներից անկախ՝ Ս. Իրենէոսը կարող է համոզուել նրա յայտնական ծագման մասին իւր եկեղեցական հմտութեամբ իսկ:

Իրենէոսին շատ անգամ են անիրաւացի կերպով մեղադրել, որ նա որպէս թէ ինչպէս մոնտանականների բարեկամ Յայտնութեան յօդուտ խօսում է միայն այդ խելայեղ աղանդի շահի տեսակէտով: Բայց, առաջին, Ս. Իրենէոսին չի կարելի մոնտանական կոչել, այդ բառի խիստ նշանակութեամբ, որովհետև նա եկեղեցու խաղաղութեան

1) *Sto Bousset, op. cit. S. 14.*

համար աշխատում է գտնել հաշտեցուցիչ ելք ուղղափառ և մոնտանական վարդապետութեանց վիճելի հիմնական խնդիրների միջև. երկրորդ, Ապոլոնիոսի և ս. Թէոփիլոս Անտիոքացու օրինակները ցոյց են տալիս որ մոնտանականութեան մինչև յայտնուելը Յայտնութիւնը արդէն ընդհանուր ընդունելութիւն և յարգանք գտած էր: Սրանից հետևում է որ ս. Իրենէոսը կարող էր իւր ցուցմունքը տալ յօգուտ Յայտնութեան անկախ իւր յարաբերութիւնից առ մոնտանականութիւնն¹⁾:

Լիոնի եւ Վիեննայի եկեղեցու քուղորդ էլալի Ասիայի եւ Փոլիգիայի եկեղեցիները. — Յօգուտ Յայտնութեան՝ Բ. դարի երկրորդ կէսի վկայութիւնների թուին կարելի է վերագրել Եւսեբիոս Կեսարացու պատմութեան (Ե. 1—3) մէջ գտնուած Լիոնի և Վիեննայի եկեղեցու թուղթը դէպի Ասիայի և Փոլիգիայի եկեղեցիները, Մարկոս Աւրելիոսի օրով՝ Գաղղիայում քրիստոնեաների վերայ հալածանքի մասին (177 թ.): Այստեղից յայտնապէս տեսնում ենք, թէ Բ. դարի վերջին՝ Յայտնութիւնը տարածուած էր արդէն Գաղղիայի եկեղեցիներում: և այն ժամանակի քրիստոնէական կեանքում ընդհանրապէս մեծ նշանակութիւն ունէր, այստեղ մենք հանդիպում ենք ոչ միայն մի տեսական համոզման նրա իսկական լինելու մասին, այլ և այն անվիճելի փաստին, թէ խիստ հալածանքի ժամանակներում Յայտնութիւնը մի կենդրոն էր, որի շուրջը խումբւում էին հալածուած քրիստոնեաների բոլոր ուժերը, և նահատակների անհամար երամները այդ գրքից էին քաղում անընկճելի արիութիւնն ու արհամարհանքն առ գերմարդկային սարսափելի տանջանքները:

Թղթի հեղինակը յաճախ քաղուածներ է անում Յայտնութիւնից, համարելով, ի հարկէ, թէ նրա ընթերցողներն էլ մեր գրքին նայում են այնպիսի յարգանքով, ինչպէս ինքն, և նրա մէջ տեսնում են մարդարէութիւն՝ որի կատարումն պէտք է օպատել ապրած ծանր ժամանա-

1) *Stu Lücke, Einleit.* 1832. S. 296—299.

կին կամ մօտաւոր ապագայում¹⁾։ Շատ կարելի է, որ թղթի խմբագրութեանը ս. Խրենէոսն էլ մասնակցութիւն է ունեցել, որ այն ժամանակ Լիոնի երէց էր։ Շատ հաւանական է, որ յատկապէս նրա ազդեցութեամբ և նոյնպէս Փոքր Ասիայից գաղթած բազմաթիւ յոյների ազդեցութեամբ, Յայտնութիւնը համարեա բոլորից այնպիսի սրտազին ընդունելութիւն գտաւ և նրա կանոնական հեղինակութիւնը խոստովանուեց, և այդպիսի ընդունելութիւն գտաւ առաջին իսկ անգամ արեւմուտքում երևան գալով։

Յայտնութեան մասին թղթի հեղինակի բազմաթիւ հատուածներից ու քաղուածներից իւր պարզութեամբ ու որոշութեամբ առանձին ուշադրութեան արժանի են հետեւեալները. «Քրիստոսի ծառայի» թղթի սկզբում խօսւում է «Հեթանոսների մեծ հալածանքի մասին սուրբերի դէմ» (Հմտ. Յայտն. ԺԱ. 18²⁾։ Վետտիոս Եպագէտի մասին այստեղ ասուած է. «Նա Քրիստոսի իսկական աշակերտն էր և հետեւում էր Գառին, ուր էլ նա գնոր» (Հմտ. Յայտ. ԺԳ. 4)։ Թղթի հեղինակը հեթանոսների մասին յայտնում է, թէ նրանք «գազանացել էին»³⁾։ Սատանան այստեղ դուրս է բերուած քրիստոնեաների դէմ հալածանքի գրլխաւոր պատճառ (Հմտ. Յայտ. Բ. 10) ու սաղրող աստուածամարտութեան (Հմտ. Յայտ. ԺԳ. 5, 6.) Սանկտոս նահատակը, թղթի հեղինակի արտայայտութեամբ «ամբարպնդուած է երկնային աղբիւրի կենդանի ջրով, որը բըղխում է Քրիստոսից» (Հմտ. Յայտ. Է. 17, ԻԱ. 1, 17. Յովհաննու աւետարանի Է. 38)։ Յետոյ խօսւում է «կենաց պսակի» որպէս նահատակութեան առաքինութեան պարգևի մասին, յայտնապէս ակնարկելով Յայտնութեան Բ. 10 στεφανος τῆς ζωῆς)։ Այս հալածանքի ժամանակ տանջուած

1) Յայտ. ԻԲ. 11. Հմտ. Եւս. Եկեղ. պատմ. Ե. 1, 58. Յայտն. ԺԳ. 4. Հմտ. Եւս. Եկեղ. պատմ. Ե. 1, 10.

2) Sio Tiefenthal, op. cit. S. 18.

3) Հմտ. Յայտ. ԺԳ. 1 կին. ուր խօսւում է ծովային գաղանի, որպէս աստուածամարտ երկրային իշխանութեան խորհրդանշանի մասին.

սուրբ նահատակները (Մատուրոս, Սանկտոս, Ալէքսանդրոս, Ատտանոս և Բլանդինա) կոչուում են թղթում «զոհբերուածներ» (Հմտ. Յայտն. Զ. 9*) և զգեստաւորուած «հարսի զգեստով» (Հմտ. Յայտ. ԺԹ. 7, 8): Ի մասնաւորի՝ Բլանդինայի մասին ասուած է, նա իւր մահուամբ ուրախ էր, որպէս թէ հրաւիրուած լինէր հարսանիքի խնջոյքի (Յայտ. Գ. 20. Հմտ. Յայտ. ԺԹ. 7, 9). «պատուիրակն (լեզատ) ու ժողովուրդը», ասում է թղթի հեղինակը, մեր վերաբերութեամբ դադանի պէս (Հմտ. Յայտ. ԺԳ. 1 և ըն.), միանման ատելութիւն էին արտայայտում. թող կատարուի գրուածքը» — և դարձեալ զիմումն առ Յայտնութիւն ԻԲ. 11: «կատարուի գրուածքը» բանաձևը ցոյց է տալիս, որ Յայտնութիւնը ամբողջովին որպէս կանոնական ընդունուած էր ընդհանրապէս Գաղղիայի ու Ասիայի եկեղեցիներում:

Վերև յիշուած բոլոր զիմումներն ու ցուցումները Յայտնութեան վերայ մեր համար նրանով աւելի նշանակութիւն ունեն, որ թոյլ են տալիս եկեղեցական կեանքի ներքինը թափանցել և համոզուել այն մեծ հեղինակութեանը, որով օժտուած էր Յայտնութիւնը որպէս մարգարէական մխիթարիչ գիրք κατ' ἐξουχίαν.

բարգ. Յուսիկ Արեւայ.

*) Զօհր, հայ Աստուածաչունչ «տեսի ի ներքոյ սեղանոյն զհոգիս ամենայն մարդկան կնքեալ»: Հայ Աստուածաչունչներից ոմանք «ամենայն մարդկան զինեալ. ուսւ. Տեսի ընդ զոհարանաւ զհոգիս սպանելոց վասն բանին Աստուծոյ:

Թարգ.